ԹԻՖԼԻՍԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ. ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐՆ ՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Թամարա Վարդանյան

Ներածություն

Հայոց ներկայությունը Թիֆլիսում հարուստ անցյալ ունի: Հայկական տարրը դարեր շարունակ եղել է Թիֆլիս քաղաքի ակտիվ, շինարար ու ստեղծագործ հատվածը: Պատահական չէ, որ այսօր տեղի հայերը հպարտությամբ են շեշտում, որ իրենք Վրաստանում պետականաստեղծ ազգ են:

Միջնադարում վրաց թագավորները սիրով էին ընդունում հատկապես հայ առևտրականներին ու արհեստավորներին, բնակեցնում թագավորական տիրույթներում՝ խոշոր քաղաքներում, որպեսզի նպաստեն հյուսիսային առևտրական մայրուղիների աշխուժացմանը և քաղաքային արհեստների զարգացմանը: Իրենց հերթին՝ վրաց հողատեր-կալվածատերերը շահագրգռված էին Թիֆլիսի արվարձաններում հայ գյուղացի-հողագործներին բնակեցնելու մեջ[1]:

Աղյուսակ 1



[1] Առավել մանրամասն տե՛ս *Π.Мурадян,* Армянская эпиграфика Грузии. Тбилиси, Ереван, 1988, с. 8-11:

2002թ. պաշտոնական մարդահամարի համաձայն՝ Վրաստանում բնակվում է մոտ 250.000 հայ, ոչ պաշտոնական աղբյուրները նշում են 460.000 թիվը: Ինչպես և անցյալում, այսօր էլ հայերի մի զգալի մաս՝ մոտ 82.000 հոգի, կենտրոնացած է Թբիլիսիում, որտեղ մի շարք թաղամասերում (Հավլաբար, Վազիսուբանի, Գլդանի, Վարկեթիլի և այլն) մեր հայրենակիցները բնակվում են համախումբ: Այնուամենայնիվ, հայերի թիվն ամբողջ Վրաստանում և մասնավորապես՝ Թիֆլիսում անընդհատ նվազում է (տե՛ս *Աղյուսակ 1):* Եթե 1989թ. մարդահամարի տվյալներով՝ հայերը կազմում էին Վրաստանի բնակչության 8%-ը, ապա 2002թ.՝ 5.7%-ը:

1. Հայ-վրացական հարաբերությունները Թբիլիսիում

Ներկայումս հայ-վրացական միջէթնիկ հարաբերություններում որոշակի անվստահության աճը լուրջ անհանգստություն է առաջացնում հայ հասարակական-քաղաքական շրջանակներում: Անզեն աչքով էլ արդեն նկատելի է անբարյացակամ (երբեմն՝ անթաքույց թշնամական) վերաբերմունքը Վրաստանի քաղաքացի էթնիկ հայերի նկատմամբ, ինչը չի կարող անտարբեր թողնել ՀՀ քաղաքական ընտրանուն և հասարակական ակտիվ շրջանակներին:

Կարելի է անվերջ խոսել տարածաշրջանի երկու քրիստոնյա ժողովուրդների՝ հայերի ու վրացիների դարավոր բարեկամության մասին՝ հղելով հատկապես 11-12-րդ դդ. հայ-վրացական զինակցության փայլուն օրինակներին: Ցավոք, այսօրվա զարգացումներն այլ տրամաբանություն ունեն և միայն պատմական անցյալով չէ, որ պայմանավորված են:

Վրացալեզու մամուլում հաճախ կարելի է հանդիպել հակահայ հրապարակումներ: Անշուշտ, մեր հայրենակիցները համոզված չեն, որ դրանց հետևում կանգնած չեն որոշակի շահագրգիռ ուժեր թե՛ Վրաստանում, թե՛ երկրից դրսում: Ինչպես նշում է փորձագետ Պաատա Զաքարեիշվիլին, Վրաստանն իրեն դեռ պետություն չի զգում, այդ պատճառով առկա է ինքնահաստատման քաղաքականություն, որը ենթադրում է ազգայնականություն: Այն ավելի շատ արտահայտվում է կենցաղային հարթությունում, բայց վրացիների համար անհրաժեշտ է թշնամու կերպար, և հայերը դարձան այդպիսին[1]:

Իր հերթին՝ վրացիների կամ Վրաստանի իշխանությունների հասցեին Երևանից հնչած ցանկացած մեղադրանք վրացական կողմն ընկալում է որպես երրորդ ուժերի (հիմնականում՝ ռուսական) կողմից հրահրվող հռետորականություն կամ սադրանք:

Եթե փորձենք հասկանալ ներկայիս իրողությունները, ապա կարելի է

[1] Закареишвили Паата: Грузия никогда не пойдет против Армении, տե՛ս http://www.panarmenian.net/interviews/rus/?nid=75

տեսնել, որ հայ-վրացական հարաբերությունների բարելավումը ձեռնտու է միայն հենց հայերին ու վրացիներին։ Միաժամանակ, թերևս, տարածաշրջանում և նրա սահմաններից դուրս չենք գտնի մեկ այլ կարևոր «դերակատարի», որին նույնպես ձեռնտու է հայ-վրացական հարաբերությունների սերտացումը (ինչ վերաբերում է արևմտյան դրամաշնորհներով գործող տարածաշրջանային ինտեգրացիոն ծրագրերին, ապա դրանք բոլորովին այլ «օպերայից» են և ոչնչով չեն շաղկապվում մեր ընդհանուր ազգային շահերին, քանի որ այդ ինտեգրումը ենթադրում է Թուրքիային և Ադրբեջանին նույնպես, որոնց հետ Հայաստանն ունի քաղաքական խնդիրներ)։

Հետևաբար, հայ-վրացական հարաբերություններում առկա կնճիռների հարթումը մնում է միայն երկու հարևան ժողովուրդների խնդիրը։

Նախ՝ հայերի շրջանում, որոնց մեջ արմատացած է հայ-վրացական դարավոր բարեկամության կարծրատիպը, տարակուսանք է հարուցում այն, թե ինչու է Վրաստանի ազգային անվտանգության հայեցակարգում այսօրվա անկախ Հայաստանը դիտվում որպես «պրագմատիկ համագործակից», իսկ Ադրբեջանը՝ «ռազմավարական դաշնակից»։ Թիֆլիսահայերի հետ մեր ունեցած զրույցներից կարելի է եզրակացնել, որ նրանց մոտ իշխում է այն կարծիքը, թե Վրաստան-Ադրբեջան-Թուրքիա խորացող մերձեցման պայմաններում հնարավոր չէ Վրաստանում հոգուտ հայոց պետական շահերի որևէ լոբբիստական գործունեություն ծավալել։ Արդյունքում՝ թիֆլիսահայությունն իր դերն ու նշանակությունը համահայկական ծրագրերում գրեթե չի տեսնում։ Այս հանգամանքը լուրջ հոգեբանական անկման պատճառ է դառնում և խորացնում սեփական անօգտակարության մասին մտայնությունը, գոնե քաղաքականապես հասուն և ազգային հարցերով մտահոգված անձանց շրջանում, որոնց թիվը տարեցտարի նվազում է։

Այսպիսով, արդի փուլում արտաքին կողմնորոշումներում և արտաքին քաղաքական դաշնակիցների ընտրության հարցում Հայաստանն ու Վրաստանը հայտնվել են քաղաքական, տնտեսական տարբեր խմբավորումներում։ Այս ամենին գումարվում և օրի օրի ի հայտ են գալիս նորանոր խնդիրներ, որոնք առկա են միջէթնիկ ընկալումներում, միջէթնիկ կամ միջհամայնական հարաբերություններում։

Քննարկելով վրաց ազգայնականության որոշ հակահայ դրսևորումները՝ պետք է խոստովանենք, որ վրաց ազգայնական ընտրանու շրջանակներում վիրահայությունն ընկալվում է որպես հնարավոր մրցակից Վրաստանում և հատկապես մայրաքաղաք Թբիլիսիում վրացական ամբողջական գերակայության հաստատման հարցում։ Սա միջէթնիկ հարաբերությունների համար շատ կարևոր գործոն է։ Հայկական տարրը դիտվում է որպես Թիֆլիսի նկատմամբ հավակնություններ ունեցող, քանի որ վրացի-

ները բազմաթիվ անգամներ լսել են, թե ինչպես են թիֆլիսահայերն ասում, թե Թիֆլիսն իրենք են կառուցել և որ այն հայկական քաղաք է: Այս հանգամանքը որոշակի ազդեցություն է գործում վրաց ընտրանու և հասարակ ժողովրդի հոգեբանության ու վարքաբանության վրա՝ առաջացնելով որոշակի անվստահություն հայերի նկատմամբ:

Սրան զուգահեռ՝ նկատվում է մեկ այլ երևույթ. վիրահայերի շրջանում ակտիվանում է 19-րդ դ. վերջին-20-րդ դ. սկզբին Թիֆլիսում իրենց սոցիալ-տնտեսական և քաղաքական գերակայության մասին կոլեկտիվ հիշողությունը: Հայկական կողմը բավական հաճախ է շեշտադրում «Հայկական Թիֆլիս» բառակապակցությունը, ինչն ավելորդ խանդի և ջղաձգության առիթ է դառնում: Անգամ «Թիֆլիս» կամ «Թբիլիսի» բառի կիրառման ընտրությունը նույնպես կարող է հակասությունների ու բախումների առիթ դառնալ, քանի որ «Թիֆլիս»-ը կիրառվում էր այն փուլում, երբ այն ավելի շատ հայկական քաղաք էր, քան վրացական:

Վրացական կողմը հայերի այդ երբեմնի գերակայությունը Թիֆլիսում բացատրում է Ռուսաստանի տարածաշրջանում վարած իբր հայամետ քաղաքականությամբ, ինչը պատմագիտական անճշտություն է: Հայոց գերակայությունը, մի շարք այլ գործոններից զատ, առավելապես պայմանավորված էր նրանով, որ հայերը կազմում էին Հարավային Կովկասի առավել հողազուրկ հատվածը և, հետևաբար, կենտրոնացած էին քաղաքներում և զբաղվում էին առևտրաարդյունաբերական գործունեությամբ: Բայց նշված շրջանառվող թեզն էլ ավելի է խորացնում վրացիների ընկալման մեջ արդեն արմատացած հայերի՝ որպես տարածաշրջանում ռուսական ներկայության հիմնական «մեղավորների», կերպարը: Սա նույնպես ջուր է լցնում վրաց ազգայնականների ջրաղացին:

Վրացական ազգայնականության մեջ հակահայկականության դրսևորման արմատները քննարկելիս, անշուշտ, դժվար է պատճառն ու հետևանքը միանգամից տարանջատել: Հարց է, թե հայերի՝ Թիֆլիսում իրենց երբեմնի գերակայության մասին պատմական հիշողությունն է այսօր ակտիվացնում վրացական ազգայնականության հակահայկական բաղադրիչները, թե հակառակը՝ Վրաստանի իշխանությունների և ընտրանու ազգայնական կեցվածքն են ակտիվացնում վիրահայության այս կոլեկտիվ հիշողությունը:

Ինչևէ, փաստն այն է, որ արդյունքում ունենք ներքին թաքնված (երբեմն նաև անթաքույց) հակասություն Վրաստանի մայրաքաղաքում թիֆլիսահայ համայնքի և վրաց հասարակության միջև:

Օբյեկտիվ լինելու համար պետք է նշել, որ այսօր Թիֆլիսում ապրող վրացիներն էլ, տեղի հայերի ընկալմամբ, տարանջատվում են երկու հիմնական հատվածների՝ հին թիֆլիսեցիների և նոր՝ հեռավոր շրջաններից

եկածների։ Հայերն իրենք իրենց համարելով հին թիֆլիսեցիներ՝ հաճախ հակադրվում են նորեկների մշակույթին ու բարքերին, իսկ այս հակադրությունն իրենց միավորում է հին թիֆլիսեցի վրացիների հետ։ Իմ զրուցակիցներից միջին տարիքի մի կին, որը Թբիլիսիից վերջերս էր տեղափոխվել Երևան՝ բնակություն հաստատելու նպատակով, ասաց, որ Թիֆլիսի իրենց թաղամասում առաջներում իրենք երեկոյան դռները բաց էին քնում, և տարիների ընթացքում ոչ մի դեպք կամ պատահար տեղի չի ունեցել։ Իսկ հիմա, երբ տարբեր շրջաններից եկել են «անհասկանալի արտաքինով և բարքերով մարդիկ, իրենց կյանքը դժոխքի է վերածվել. հաճախակի են դարձել տհաճ միջադեպերը, գողությունները»։

Նշենք, որ թիֆլիսյան միջավայրին բնորոշ է մի կարևոր առանձնահատկություն. սոցիալ-տնտեսական զարգացումներն այստեղ ավանդաբար ստանում են էթնիկ երանգավորում և վերաձևավորում են միջէթնիկ հարաբերությունները։ Այժմ, ինչպես և 19-րդ դ. վերջին-20-րդ դ. սկզբին, նման մի պատմական շրջադարձային փուլ է վերապրում բազմազգ Թիֆլիսը։

2. Թիֆլիսահայերի ինքնության հետ կապված որոշ հարցեր

Թիֆլիսահայերի շրջանում հայկական ազգայնականությունն ավելի թույլ է արտահայտված, քան, օրինակ, ջավախահայերի մոտ։ Բացի այդ, թիֆլիսահայերը, ինչպես անցյալում, այնպես էլ հիմա, թույլ են քաղաքականացված, կրկին ի տարբերություն ջավախահայերի։ Օրինակ՝ Ղարաբաղյան պատերազմում հայերի տարած հաղթանակը կարծես թե էական ազդեցություն չի գործել թիֆլիսահայության էթնիկ վարքաբանության վրա (ըստ հեղինակի կատարած դաշտային հետազոտության)։ Հաղթող հայի կերպարը թիֆլիսահայ միջավայրում համեմատաբար թույլ է արտահայտված։

Մյուս առանձնահատկությունն այն է, որ այստեղ թույլ են արտահայտված նաև պատմականորեն համայնական կյանքով ապրող ժողովուրդներին բնորոշ (առաջին հերթին՝ հայերին) ինքնապաշտպանական մեխանիզմները (իմունիտետը)։ Ի թիվս այլ գործոնների, դա բացատրվում է նրանով, որ թիֆլիսահայն իրեն եկվոր չի համարում Թիֆլիսում։ Հնուց մինչև 20-րդ դ. սկիզբ հայկական տարրն ակտիվ ներգրավված էր Թիֆլիսի քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքում, և թիֆլիսահայը Թիֆլիսը չի ընկալել որպես ժամանակավոր ապաստարան։ Եթե սփյուռքում ապրող հայությանն ընդհանուր առմամբ բնորոշ է վիրտուալ հոգեբանական կապը Հայրենիքի հետ՝ Հայրենիքի տեսիլքը, թաքուն փայփայած հավատն առ այն, որ մի օր լինելու է *վերադարձ դեպի Հայրենիք*, ապա թիֆլիսահայ միջավայրում այս սպասումը չի նկատվում, քանի որ *«Թիֆլիսն ինքն է*

կառուցել, և այն իր տունն է»[1], *«Մեզ մոտ չկա տրադիցիոն համայնքային ինքնագիտակցություն, ինչպես Սփյուռքում դա կա: Պատճառն այն է, որ Վրաստանում մենք չենք զգում, թե մենք տանը չենք, թիֆլիսահայերս զգում ենք Թիֆլիսը որպես մեր տունը, 90%-ի համար էս քաղաքը հայի սեփականությունն է, քանի որ ամեն ինչ հայն է ստեղծել, հայի շունչն էստեղ կա: Էստեղ չի գործում սփյուռքին բնորոշ ինքնապահպանման որևէ մոդել»*[2]:

Ինչպես նշում է մեր մյուս զրուցակիցը, *«մենք հյուր չենք այս տարածքում, ընդհակառակը, մենք միշտ եղել ենք, մենք ենք ուրիշներին ընդունել»*[3]:

Այս ընալումը պահպանվել է մինչև օրս:

Մյուս կողմից էլ՝ Թբիլիսին բավական մոտ է Հայաստանին, և թիֆլիսահայության շրջանում անկախության այս 15 տարիների ընթացքում դեռևս չի ձևավորվել արտերկրում ապրողի գիտակցությունը: Մեր զրուցակցի խոսքերով՝ *«մեզ միշտ թվացել է, թե մենք ապրում ենք երկու սենյականոց բնակարանում, ոչ մի հայի մտքով չէր անցնում, որ տեղափոխվելով Երևանից Թիֆլիս՝ ինքը հայտնվել է այլ երկրում: Մեզ համար Վրաստանը Հայաստանի շարունակությունն է. և՛ այնտեղ է Հայաստան, և՛ այստեղ, և՛ այնտեղ հայեր կան, և՛ այստեղ: Հիմա ամեն ինչ փոխվել է, բայց մենք դեռ չենք փոխվել»*[4]:

Այսպիսով, թիֆլիսահայն իրեն չի համարում սփյուռքում ապրող հայ, որն ինքնության պահպանման կարիք ունի:

Այս առանձնահատկություններով է հիմնականում պայմանավորված թիֆլիսահայերի էթնոպաշտպանական ավանդական մեխանիզմների թույլ արտահայտվածությունը և որպես հետևանք՝ տեղում կազմակերպված համայնքի բացակայությունը:

3. Կրթական խնդիրներ

Ի թիվս նշվածների, մեկ հանգամանք ևս բացասաբար է անդրադառնում Թբիլիսիում հայապահպանության գործին, որն այսօր արդեն խիստ արդիական ու հրատապ է:

Խնդիրն այն է, որ այսօր չկա մի օղակ կամ մեխանիզմ, որն իր ուսերին կվերցնի Թիֆլիսում հայկականության պահպանման գործառույթը:

Այսպես. 19-րդ դ. վերջին – 20 –րդ դ. սկզբին Վրաստանի մայրաքաղաքում ձևավորվել էր հզոր հայկական կապիտալ, որն էլ կարողացավ հաջողությամբ կազմակերպել ազգային կրթության, լուսավորության գործը:

[1] Զայներիզ թիվ 17:
[2] Զայներիզ թիվ 15:
[3] Զայներիզ թիվ 17:
[4] Զայներիզ թիվ 17:

Խորհրդային իշխանության հաստատման արդյունքում հայկական կապիտալը թողեց երկիրը, արդյունքում՝ հայապահպան գործունեությունը ազգային կապիտալի ուսերից տեղափոխվեց ինտերնացիոնալիզմի սկզբունքով ձևավորված կրթական, այսինքն՝ պետական ֆինանսավորման համակարգ։ Բոլոր կրթական հաստատությունները՝ հայկական դպրոցներ, բուհական հայկական ամբիոն (որը բացվեց 1939թ.), նաև հայատառ մամուլ, անցան պետության ձեռքը, որը և հոգում էր դրանց պահպանման ծախսերը։ Այս իրադրության պայմաններում արդեն իսկ սկսեց անկում ապրել հայեցի կրթությունը, որն էլ գագաթնակետին հասավ ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին։

Այժմ ստեղծվել է մի իրավիճակ, երբ չկա ո՛չ ազգային կապիտալ, ո՛չ էլ խորհրդային պետություն, որն, այնուամենայնիվ, քիչ թե շատ հավասար աչքով էր նայում հայկական և վրացական կրթական հաստատությունների գոյությանը։ Այսպիսով, Թիֆլիսում չկա մի ծանրակշիռ կառույց՝ ազգային կամ պետական, որը շահագրգռված լինի հայկական կրթական հաստատությունների զարգացմամբ ու բարգավաճմամբ։ Անշուշտ, Վրաստանը որպես պետություն շարունակում է ֆինանսավորել դրանք, բայց որպես ազգային պետություն ստեղծելու հավակնություններով պետական միավորում՝ Վրաստանին ամենևին էլ ձեռնտու չէ հայկական կրթական հաստատությունների բարեկարգումը։

Մյուս կողմից՝ համայնքի ներսում դրանք զարգացնելու ներուժ չկա, ինչպես իմ զրուցակիցներն են ասում, *«Թիֆլիսի հայկական դպրոցները փրկելու ջանքերն արդեն ուշացած են»*[1]։

Այսպես, կրթական համակարգի բարեփոխումների համատեքստում Վրաստանի կառավարությունը հանրակրթության ոլորտում անցնում է, այսպես կոչված, վաուչերային համակարգի։ Այս «բարեփոխումը» ենթադրում է, որ բոլոր այն դպրոցները, որտեղ աշակերտների թիվը 700-800-ից պակաս է, մեխանիկորեն պետք է փակվեն, քանի որ պետությունն ի վիճակի չէ սուբսիդավորել դրանք։

Թբիլիսիում գործում են 2 հայկական դպրոց և 6 դպրոց, որտեղ գործում են հայկական սեկտորներ։ Անցած տարվա տվյալներով՝ նշված 8 դպրոցներում սովորող հայ աշակերտների թիվը միասին վերցրած կազմում էր մոտ 700 աշակերտ։ Տեղի հայությունը երեխաներին հիմնականում ուղարկում է ռուսական դպրոցներ։ Դրանցում սովորողների մոտ 90%-ը, իսկ ուսուցիչների 75-80%-ը հայեր են։ Վերջին շրջանում նոր միտումներ են նկատվում՝ ավելանում է վրացական դպրոցներում հայ երեխաների թիվը (այսօր արդեն մոտ 15 %)։

Նոր ուսումնական տարում նշված 8 դպրոցները շարունակում են

[1] Զայներիզ թիվ 3։

իրենց կրթական առաքելությունը, բայց մի քանի դպրոցներում իրականացվել է հետևյալ ծրագիրը. ձևավորվել են, այսպես կոչված, կոմպլեկտ դասարաններ։ Այսինքն, երբ միավորվում են մի քանի դասարաններ (օրինակ՝ 1-ին և 2-րդ, 3-րդ և 4-րդ և այլն), կրթական գործընթացը վարում է մեկ ուսուցիչ, բայց դասարանում նստած են տարբեր տարիքի և դասարանի աշակերտներ։ Այս նորամուծությունը թույլ է տալիս կրճատել դպրոցի ուսուցչական կազմը։ Անշուշտ, այս կերպ էլ ավելի կտուժի ուսումնառության որակը, կառաջանա նոր դժգոհություն ծնողների շրջանում, և աշակերտների թիվը կշարունակի պակասել։ Փաստորեն, այս մեթոդով հայկական դպրոցների և հայեցի կրթություն ստանալու գլխավոր խնդիրը ոչ միայն չի լուծվում, այլև խորացնում է այս համակարգում առկա ճգնաժամը։

Ռուսական դպրոցներում ևս առկա են բազմաթիվ խնդիրներ։ Օրինակ՝ տեղի ռուսական դպրոցներից մեկում, որը գտնվում է հայաշատ թաղամասում, և աշակերտների գերակշռող մասը հայեր են, մի շարք առարկաներ անցնում են վրացերենով, թեպետ օրենքով դրանք պետք է դասավանդվեն ռուսերեն։ Օրինակ՝ մաթեմատիկա առարկան դասավանդում են ռուսերեն, իսկ ֆիզիկան՝ վրացերեն լեզվով։ Այն հարցին, թե ինչու է այսպես, ինձ պատասխանեցին. *«Պատճառ այն է, որ ֆիզիկայի ուսուցիչն ուղղակի ռուսերենին չի տիրապետում»*։ Բնական է, որ աշակերտի համար լեզվական խոչընդոտներ են ստեղծվում, քանի որ այդ երկու բնագիտական առարկաները շաղկապված են իրար, և դրանց ուսանումը տարբեր լեզուներով բարդություններ կարող է առաջացնել առարկաների յուրացման առումով։ Հարց է ծագում. ինչո՞ւ ռուսական դպրոցում աշխատող ուսուցիչը չի տիրապետում ռուսերենին։ Այսպիսով, Թբիլիսիում գործող ռուսական դպրոցների կրթական մակարդակի սրընթաց անկման հետևանքով տեղի հայությունը սկսել է վերակողմնորոշվել դեպի վրացական դպրոցներ։

Փաստորեն, Վրաստանում տխուր հեռանկար ունեն ոչ միայն հայկական, այլև ռուսական դպրոցները, այն պարզ պատճառով, որ կառավարության որոշման համաձայն՝ բուհ ընդունվելու համար բոլոր դիմորդները պետք է հանձնեն նույն բարդությամբ վրացերեն լեզվի քննություններ, ինչը պահանջվում է վրացական դպրոցների շրջանավարտներից։ Այդ է նաև մյուս պատճառը, որ եթե մինչև վերջերս հայերը զանգվածաբար հաճախում էին ռուսական դպրոցներ, ապա վերջին 1-2 տարիներին նկատվում է դեպի վրացական դպրոցներ հայ աշակերտների հոսքի ավելացում։

Այսպիսով, ստեղծվել է մի իրավիճակ, ինչպես հայտնի հեքիաթներում, երբ հերոսն ունի երեք ճանապարհ և պետք է ընտրի միայն մեկը.

1. գնալ հայկական դպրոց, ստանալ ոչ լիարժեք միջնակարգ կրթություն, կատարելապես չտիրապետել գրական վրացերենին, ունենալ լուրջ

դժվարություններ բարձրագույն կրթություն ստանալու և հետագայում երկրում սոցիալացվելու հարցում: Դա նշանակում է կամ մնալ Թբիլիսիում և զբաղեցնել հասարակական ցածր դիրք, կամ մեկնել Հայաստան և փորձել հաստատվել Հայրենիքում,

2. գնալ ռուսական դպրոց, ստանալ նորից ոչ լիարժեք միջնակարգ կրթություն, չտիրապետել մայրենի լեզվին և հետագայում բռնել արտագաղթի ճամփան, ընդ որում՝ ոչ թե դեպի Հայաստան, այլ այս դեպքում նպատակահարմար է դեպի Ռուսաստան,
3. գնալ վրացական դպրոց, փորձել ինտեգրվել վրաց հասարակությունում, մնալ Վրաստանում, բայց չտիրապետել մայրենի լեզվին:

Եթե անցած դարի 60-70-ականներին հայ ծնողները երեխաներին տանում էին հիմնականում հայկական դպրոցներ, իսկ 80-90-ականներին՝ ռուսական, ապա հիմա՝ առավելապես վրացական:

Անցյալ դարի 60-70-ականներին հայկական կրթություն ստացած թիֆլիսահայերի սերնդի մի մասը տեղափոխվեց Երևան և հաստատվեց այստեղ, իսկ այն հատվածը, որը մնաց տեղում, այնուամենայնիվ, չկարողացավ այստեղ հասնել հասարակական բարձր դիրքի: Բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ խոչընդոտների հետևանքով հայերին չհաջողվեց Թիֆլիսում ձևավորել ազգային ընտրանի: Առանձին անհատներ, որոնց, այնուամենայնիվ, հաջողվեց որևէ դիրքի հասնել, ինքնաբերաբար կտրվեցին հայկական համայնքից, քանի որ քանակապես քիչ լինելով՝ չկարողացան Վրաստանի վերնախավում որակ ձևավորել, ստեղծել, այսպես ասած, «հայկական ազգային էլիտար միջավայր», որի միջոցով կարելի էր պահպանել ինքնությունը:

Այսպիսով, անկախությունից առաջ արդեն ստեղծվել էին այն նախադրյալները, որոնք համայնքը տանում էին դեպի նոր փորձություններ:

4. Տեղեկատվական հարցեր

Թերևս, կրթական խնդիրն ամենակարևորն ու առանցքայինն է թիֆլիսահայ միջավայրում: Բայց այլ ոլորտներում ևս խնդիրներ կան:

Կան լուրջ խնդիրներ տեղեկատվական դաշտում:

Վրաստանի, մասնավորապես Թիֆլիսի տեղեկատվական դաշտում հայությունը ներկայացված չէ: Կարելի է նշել, որ տեղի հայությունը տեղեկատվական վակուումի մեջ է.

- չկան հայալեզու անկախ թերթեր, միայն պաշտոնական «Վրաստան» թերթը, որը հայության կողմից ընկալվում է որպես վրացական իշխանությունների խոսափող,
- չկան հայալեզու ամսագրեր, հայալեզու մանկական ամսագիրը՝

«Արևիկ»-ը, պարբերաբար ֆինանսական խնդիրներ է ունենում և բազմիցս կանգնել է փակման վտանգի առաջ։ Միայն վերջերս սկսել է հրատարակվել Վիրահայոց թեմի հոգևոր, մշակութային «Նորաշեն»հանդեսը, որը լուրջ ներդրում կարող է ունենալ այս հարցում,

- չկան հայալեզու հեռուստահաղորդումներ, բացի պաշտոնապես թույլ տրված շաբաթական մեկանգամյա մոտ 20 րոպեանոց հաղորդումից, որը նույնպես պետական դոտացիայի հաշվին է գործում և Եվրախորհրդի պահանջների հետևանք է միայն։ Այդ հաղորդման ընթացքում քաղաքական հարցեր չեն քննարկվում ընդհանրապես, այն չի կարող ազգային խնդիրների շուրջ հայահավաքման գործառույթ իրականացնել։ Բացի այդ, թիֆլիսահայությունը զուրկ է այն մեխանիզմներից, որոնց միջոցով որպես համայն հայության մի հատված կարող է իրեն որպես այդպիսին ընկալել և զգալ։ Այսինքն՝ մասնատվածությունը խորն է, ընդ որում՝ բուն Վրաստանի տարածքում նույնպես։ Շատ թույլ է կապը ջավախահայության և թիֆլիսահայության միջև, չկա մշտական տեղեկատվության փոխանակում մեկ երկրում բնակվող նույն ազգի երկու հատվածների միջև,
- չկան ինտերնետային կայքեր, բացի մեկ հայկական ռուսալեզու կայքից, որը փորձում է բավարարել տեղեկատվության պահանջը, թեպետ ինտերնետը, բնականաբար, հասանելի չէ հասարակական լայն շրջանակներին,
- չկա ռադիոհաղորդում, բացի օրական 5 րոպեանոց պաշտոնական հաղորդումից, որը նույնպես արվում է Եվրախորհրդի պահանջով։

5. Եկեղեցի

Վերջին շրջանում ազգային ավանդույթներին հակված երիտասարդությունը միավորվում և համախմբվում է եկեղեցու շուրջ։ Վիրահայոց թեմի գործունեությունն աշխուժացել է շնորհիվ Վազգեն սրբազանի հայանպաստ գործունեության։Կազմակերպվում են եկեղեցական տոներին նվիրված միջոցառումներ, ինչպես նաև հրատարակվում է խորհրդանշական՝ «Նորաշեն» խորագիրը կրող պարբերականը (Վիրահայոց թեմի հոգևոր, մշակութային հանդես)։

6. Հասարակական կյանք

Թիֆլիսի հայկական համայնքն այս տարիների ընթացքում գտնվել է աստիճանական անկման փուլում (եղել են առանձին ակտիվության դրսևորումներ, բայց դրանց կազմակերպված և հետևողական գործողությունների

տեսք չի հաղորդվել)։ Պատճառներից մեկն այն է, որ հայության ուներոր և ակտիվ հատվածը հիմնականում արտագաղթել է երկրից, մնացել է առավել պասիվ հատվածը, որը հիմնականում պարփակվել է կենցաղային պրոբլեմների հորձանուտում և ակտիվություն ու նախաձեռնություն չի ցուցաբերում։

Միևնույն ժամանակ, վերջին 2-3 տարիների ընթացքում հայկական միջավայրում նկատելի են հասարակական ակտիվության նոր տիպի դրսևորումներ, հիմնականում հասարակական կազմակերպությունների ձևաչափով, ինչը նախապայմաններ է ստեղծում Թբիլիսիում հայկական ներուժի վերականգնման համար։ Ընդհանրապես, Սփյուռքում գործող հայկական ՀԿ-ների հետաքրքիր առանձնահատկություններից մեկն այն է, որ դրանք, դասական ՀԿ-ներին բնորոշ գործունեությունից զատ, նաև իրականացնում են համայնքային կյանքի կազմակերպման, այսինքն՝ ազգապահպանման գործառույթ։

Այնուամենայիվ, վերջին շրջանում վիրահայության մոտ տեղի է ունենում երկարատև լճացման և անորոշությունների փուլից անցում մի իրավիճակի, երբ ձևավորվում է իրողությունների համարժեք ընկալում։ Այս փուլը բնորոշվում է հստակ խնդիրների ձևակերպմամբ։ Այլ խոսքերով, եթե Վրաստանի անկախության առաջին տասնամյակում վիրահայերն առկա դժվարությունների պատճառները որոնում էին ընդհանուր սոցիալ-տնտեսական խնդիրների հարթությունում և դրանք բացատրում անցումային շրջանին բնորոշ երևույթներով, ապա այսօր պատասխանները հստակ են և տանում են դեպի էթնոքաղաքական հարթություն։

7. Վերջին զարգացումները

Վրաստանում արդեն երեք տարի շարունակ Թուրքիայի դեսպանատան մոտ անցկացվում է խաղաղ ցույց՝ 1915թ. Ցեղասպանության ճանաչման պահանջով։ Այն կազմակերպվում է տեղի ակտիվ հայերի ջանքերով, որոնք հիմնականում միավորված են հասարակական կազմակերպությունների շրջանակներում և փորձում են հնարավոր միջոցներով բարձրացնել համայնքի ներքին ակտիվությունը, թուլացնել հոգեբանական ընկճվածությունն ու ազգային խնդիրների հանդեպ տիրող անտարբերությունը. այս վերջին մտահոգիչ երևույթները, ցավոք, դարձել են թիֆլիսահայ համայնքի հիմնական ախտանիշները։ Միևնույն ժամանակ, վերջին շրջանի համար հուսադրող է այն փաստը, որ ստեղծված իրադրության հետևանքով առկա վտանգներն արդեն գոնե գիտակցված և ձևակերպված են թիֆլիսահայ որոշակի շրջանակներում։

Համայնքի ներսում (թեպետ թիֆլիսահայ իրականության համար

«համայնք» եզրը պետք է կիրառել որոշ վերապահումներով) աստիճանաբար ձևավորվում է երիտասարդության մի փոքր հատված, որը կարծես թե պատրաստ է որոշակի ներդրումներ կատարել համայնքի վերազարթոնքի ուղղությամբ։ Հարկ է նշել, որ այս տարի ապրիլի 24-ի ավանդական միջոցառումներն առավել կազմակերպված են անցկացվել։ Բայց նշանակալին այն է, որ Վրաստանում Թուրքիայի դեսպանատան առջև խաղաղ ցույցն աննախադեպ էր մասնակիցների թվաքանակով՝ 450-500, ընդ որում՝ խիստ անբարենպաստ եղանակային պայմաններում (նշենք, որ անցած տարի մասնակիցների թիվը չէր գերազանցում 50-70-ը)։

Ինչո՞ւ է մեր կողմից կարևորվում այս փաստը։ Բանն այն է, որ ապրիլի 24-ին ավանդաբար անցկացվող միջոցառումները տեղի են ունենում Ս.Գևորգ եկեղեցում և Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան Հայկական պետական դրամատիկական թատրոնի շենքում, որտեղ ներկա են գտնվում ոչ միայն տեղի հայության ակտիվ ներկայացուցիչները, այլև պետական պաշտոնյաներ, Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանը, համայնքի աչքի ընկնող անդամներ։ Նման միջոցառումները, որպես կանոն, առավել ձևական բնույթ են կրում և հասարակության կողմից ընկալվում են որպես «վերևից» կազմակերպված միջոցառումներ։ Իսկ վերոնշյալ խաղաղ ցույցը բոլորովին այլ ազդեցություն ունի, քանի որ կազմակերպվում է ակտիվ երիտասարդների կողմից, և ոչ մի պաշտոնյա, բնականաբար, ներկա չի գտնվում թուրքական դեսպանատան առջև կազմակերպվող խաղաղ ցույցին։ Եվ այն ուշագրավ է այնքանով, որ կազմակերպված է «ներքևից» և ինքնաբուխ է, մասնակիցները նաև գիտեն, որ այս միջոցառումն այնքան էլ չեն ողջունում վրացական իշխանությունները։ Բացի այդ, նախորդ օրը՝ ապրիլի 23-ին անցկացվել էր նաև բողոքի խաղաղ ջահերթ՝ «Հիշատակի ու պայքարի հուրը», կրկին Վրաստանում Թուրքիայի դեսպանատան առջև (կազմակերպվել էր տեղի ՀԿ-ներից մեկի՝ Վրաստանի Հայկական համագործակցության կենտրոնի (ՎՀՀԿ) ջանքերով)։

Ակնհայտ է, որ թիֆլիսահայ երիտասարդության շրջանում (գոնե այն հատվածի, որն ամեն կերպ ձգտում է հավատարիմ մնալ ազգային արմատներին) ներկայումս ակտիվացել են ներազգային համախմբող գործընթացները։ Եթե առաջներում ներքին ընդվզումը կրում էր առավել տարերային և հատվածական բնույթ, ապա այսօր արդեն կազմակերպված երիտասարդությունը ոչ միայն կշռադատված ու հետևողական է նույն խնդիրների նկատմամբ, այլև հստակ պատկերացնում է իր ներուժը։ Իրականում այդ ներուժն այնքան էլ հզոր չէ, ավելին՝ այն բավական թույլ է, բայց կա դրա ուժեղացման անհրաժեշտության և նպատակային օգտագործման հստակ գիտակցություն։

Տեղի կրթված և գիտակից հայ երիտասարդությունը ականատեսն է այն փաստի, որ վրացիները հայերին ընկալում են որպես կոշկակարների, վարսավիրների, վարորդների ազգ։ Այս ընկալումը վիրավորում է նրանց, և վերջիններս իրենց գործունեությամբ ձգտում են ապացուցել, թե վիրահայությունն ինչ ներուժ ունի և կարող է ծառայել Վրաստանի պետության հզորացմանն ու բարգավաճմանը։ Դրանից զատ, կազմակերպված երիտասարդությունը ձգտում է նաև օգտակար լինել Հայրենիքին։

Ներազգային համախմբման գործընթացներն ընդգրկում են սահմանափակ շրջանակներ (ոչ միայն քանակական, այլև տարիքային իմաստով)։ Խնդիրն այն է, որ ավագ սերնդի ներկայացուցիչները, որոնք քիչ թե շատ մտահոգված են համայնքի գոյապահպանման խնդիրներով, կամ միայնակ են գործում, կամ գտնվում են ստվերում, կամ էլ ակտիվություն ցուցաբերելու դեպքում հեռացվում են աշխատանքից։ Նման դեպք տեղի ունեցավ վերջերս Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան Հայկական պետական դրամատիկական թատրոնի փոխտնօրեն, գրող Ռաֆայել Գրիգորյանի հետ։ Նա հանդգնել էր վրացական հեռուստաալիքով (Ռուսթավի-2) արտահայտել իր համաձայնությունն այն կարծիքին, որ Վրաստանում հայկական մշակութային ժառանգության նկատմամբ վանդալիզմի ակտեր են կատարվում։ Հաջորդ օրը Ռ.Գրիգորյանին կանչում են հարցաքննության Վրաստանի Անվտանգության նախարարության Իսանի-Սամգորի բաժանմունք, և արդյունքում՝ Գրիգորյանը հայտնվում է «խաղից դուրս» վիճակում. հայկական թատրոնի հայազգի կոլեկտիվի որոշմամբ նա հեռացվում է աշխատանքից։

Անշուշտ, տեղի ունեցածը բավական ցավալի է։ Խնդիրը ոչ այնքան վրացական իշխանությունների վարած հակահայկական ներքին քաղաքականությունն է։ Առավել մտահոգիչն այն է, որ նշված դեպքից հետո թիֆլիսահայ համայնքում որևէ բացահայտ վրդովմունք կամ կազմակերպված ընդվզում տեղի չունեցավ (բացի վերոնշյալ ՀԿ-ից, որը մամլո հաղորդագրություն էր տարածել և դատապարտել արարքը՝ միաժամանակ կոչ անելով վերականգնել Ռ.Գրիգորյանին իր զբաղեցրած պաշտոնում)։ Վրաստանի խորհրդարանի հայազգի հինգ պատգամավորներից և ոչ մեկը հանդես չեկավ քննադատությամբ։ Չլսվեց նաև դեսպանի ձայնը։ Ռ.Գրիգորյանի հետ կատարվածը ոչ միայն բացահայտում է Վրաստանում ազատ խոսքի և էթնիկ փոքրամասնությունների իրավունքների հարցերում տիրող իրավիճակը։ Կատարվածն, անշուշտ, կունենա այլ բացասական հետևանքներ ևս։ Բնական է, որ արդյունքում ավելի կթուլանան հայկականության պահպանման պատրաստակամությունն ու անարդարության դեմ ընդվզելու ցանկությունը։

Մյուս բացասական հետևանքն այն է, որ խնդրին տեղեկացված հայ

հասարակությունը հոգեբանորեն կօտարվի հայկական թատրոնից, քանի որ թատրոնի անձնակազմի արարքը միայն հիասթափություն կարող է առաջացնել հայերի շրջանում։

Այսպես. այս ցավալի դեպքը դատապարտող հայ երիտասարդությունն արդեն իր գոհունակությունն է արտահայտել այն փաստից, որ Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն սրբազանը ներկա չի գտնվել հայկական թատրոնի այս տարվա թատերաշրջանի բացմանը (թեպետ պաշտոնապես պարզ չէ, թե ինչու Սրբազանը ներկա չի եղել, բայց այստեղ կարևորը երևույթի ընկալումն ու գնահատումն է հասարակության կողմից, այլ ոչ թե Սրբազանի ներկա չգտնվելու իրական պատճառը)։

Անկասկած, նման զարգացումները մտահոգիչ են, քանի որ մինչև վերջերս մեր այն հարցին, թե եթե Թիֆլիսում որևէ հայ խնդիր է ունենում, ո՞ւր է գնում, ստանում էինք հետևյալ պատասխանը՝ հայկական թատրոն։

* * *

Մի խնդիր ևս կարոտ է լուսաբանման, որը նույնպես տարանջատում է հայկական համայնքը և օտարում այն վրացական հասարակությունից ու հատկապես իշխանություններից. դա Վերայի գերեզմանատան (հայերի շրջանում, այսպես ասած, արիստոկրատական հայկական) ճակատագիրն է։ Այստեղ հիմնականում ամփոփված են հայազգի ննջեցյալներ՝ Մանթաշյանց, Բյուզանդյանց, Յուզբաշյանների ընտանիքը, Թամամշևի աղջկա՝ Սոֆյայի դամբարանը և այլք։ Դեռևս 1925թ. այդ գերեզմանոցը հայտարարվեց փակ, քանի որ հողատարածքը սպառվեց։ Բայց վերջին շրջանում վրաց մեծահարուստներին հաջողվում է տարածք վերցնել այստեղ և ուղղակի հենց հին ննջեցյալների վրա նոր թաղումներ կատարել (ոչ պաշտոնական տվյալներով՝ 1 մետր լայնություն և 2 մետր երկարություն ունեցող հողատարածքն արժե 1000 ԱՄՆ դոլար)։ Այսպիսով, նախկին ննջեցյալների գերեզմաններն ավերվում են։ Իմ զրուցակիցներից մեկը ցավով նշեց. *«Հիմա հայ մեծամեծերի գերեզմանում թաղվում են գողեր, ավազակներ, թմրամոլներ»*[1]։

Անշուշտ, նույն երևույթը կարող էր տեղի ունենալ նաև այն պարագայում, եթե այստեղ թաղված լինեին վրաց մեծամեծեր, բայց թիֆլիսյան միջավայրի առանձնահատկությունը հենց այն է, որ այդ փաստը ստանում է էթնիկ բովանդակություն։

[1] Ձայներիզ թիվ 7։

8. Հայացք Երևանից

Մեկ դիտարկում ևս։ Հայաստանյան իրականության մեջ իշխում է Սփյուռքի՝ որպես միասնական մի մարմնի, ընկալում, այնինչ մենք գտնում ենք, որ պետք է տարբերակված մոտեցում ցուցաբերել և տարանջատել համայնքները ոչ միայն ըստ իրենց աշխարհագրական վայրի կամ թվաքանակի, այլ առաջին հերթին հայկականության պահպանման համար առկա մեխանիզմների, կազմակերպված համայնքի առկայության և ներքին ներուժի առումներով։

Թիֆլիսահայ համայնքի վերաբերյալ հայաստանյան մոտեցումներում կա մի առաջնային խնդիր։ Հայաստանում վիրահայության խնդիրը քննարկվում է առավելապես ջավախահայության կտրվածքով, իսկ թիֆլիսահայությունը կարծես թե մոռացության է մատնված։ Մինչդեռ այդ երկու հիմնախնդիրները պետք է դիտարկել փոխկապակցված, առաջինը երկրորդով պայմանավորելով և հակառակը։

Անվտանգության տեսակետից դրանց տարանջատումը վտանգավոր է։

ТБИЛИССКИЕ АРМЯНЕ: ВЫЗОВЫ ВРЕМЕНИ И ПЕРСПЕКТИВЫ ОБЩИНЫ

Тамара Варданян

На основе материалов полевого исследования автором представлен доклад, всевторонне раскрывающий современное положение армян Тбилиси. Затрагиваются вопросы, касающиеся некоторых важных сфер жизнедеятельности армян как этнического меньшинства в Грузии. Проблемы рассматриваются в контексте сохранения этнической идентичности армян в ситуации, когда Грузия проводит политику строительства «нации-государства». Эта политика направлена на вытеснение армян на периферию социальной стратификации города и имеет конечную цель – полное вытеснение или ассимиляция армян и создание гомогенной демографической ситуации в грузинской столице.

Детально рассматриваются ментальные и поведенческие нормы и особенности, характерные для тбилисских армян, в свете того, что они с незапа-

мятных времен являются жителями грузинской столицы и внесли неоценимый вклад в дело сторительства и процветания Грузии.

Автором также раскрываются основные маркеры идентичности, к которым апеллируют армяне грузинской столицы. Отдельно расскрываются глубина и проблематичность задач, касающихся таких жизненно важных сфер, как образование, духовная и культурная жизнь, социальная коммуникация, возможности интеграции и социализации для армянской молодежи, негативные тенденции в плане ассимиляции и потери национального самосознания и т.д.

В свете современной геополитической обстановки и активного внедрения политики «третьих сил» в регионе происходит процесс стремительной деконструкции армянской и грузинской исторической памяти «о двух братских христианских народах Южного Кавказа», чему способствуют учащающиеся антиармянские публикации в грузинской прессе. По мнению автора, на данном историческом этапе развития отношений, к сожалению, получилось так, что улучшение грузино-армянских отношений стало выгодно разве что одним только армянам и грузинам, которым еще придется осознавать эту истину во всей своей глубине и в полном объеме.